

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/հաստատվել է արհեստագրական կազմակերպության 2019 թվականի փետրվարի 22-ի համաժողովում/

ԿԱՊԱՆ 2019

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպությունն իր բնականոն գործունեությունն է իրականացրել ՀՀ օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան՝ պահպանելով Կազմակերպության գործունեության օրինականության, կամավորության, համերաշխության, իրավահավասարության, կոլեգիալության, ժողովրդավարության, հրապարակայնության սկզբունքները:

Մասնավորապես.

1. Ներկայացրել է Կազմակերպության անդամների շահերը և պաշտպանել նրանց իրավունքներն աշխատանքային հարաբերություններում:
2. Ներկայացրել է առաջարկություններ՝ աշխատողների աշխատանքի պայմանների բարելավման վերաբերյալ:
3. Մասնաճյուղի հետ համագործակցել է Կազմակերպության անդամների պարգևատրման և խրախուսման հարցերում:
4. Միավորել է Կազմակերպության անդամների ջանքերը և համակարգել գործողությունները Կազմակերպության նպատակների իրականացման համար:
5. Սահմանված կարգով վարել է գործավարությունը և հաշվապահական հաշվառումը:
6. Նպատակաուղղել է Կազմակերպության միջոցները Կազմակերպության անդամների համար ծրագրերի իրականացմանը, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպմանը:
7. **Համաժողովում** (23.03.2018թ.) քննարկվել և հաստատվել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության **2017թ.-ի տարեկան հաշվետվությունը**:
8. Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն գումարել է 9 նիստ, քննարկել 24 հարց և ընդունել 25 որոշում: Իր գործունեության մասին եռամսյա պարբերականությամբ իրազեկել է Կազմակերպության անդամներին՝ հրապարակելով այն ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի պաշտոնական կայքում:
9. Նշված ժամանակահատվածում 23.03.2018 թ.-ի **համաժողովում** քննարկվել և հաստատվել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության 2018թ.-ի տարեկան բյուջեի նախահաշվը:
10. Կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով՝ **համաժողովում** (23.03.2018թ.) քննարկվել և հաստատվել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի

Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության **ծրագրերի կանոնակարգը:**

11. 23.03.2018թ.-ի համաժողովի որոշմամբ արհեստակցական կազմակերպության 2018թ.-ի ծրագրերի իրականացման համար հատկացվել է 500 000 ՀՀ դրամ, որից ծախսվել է 399 448 ՀՀ դրամ. **«Ուրախություն և տոն»** ծրագրով՝ 214 890 ՀՀ դրամ, **«Սոցիալական օգնություն»** ծրագրով՝ 20 000 ՀՀ դրամ և **«Մշակույթ, սպորտ և հանգիստ»** ծրագրով՝ 164 558 ՀՀ դրամ: Մասնավորապես.
 - 11.1. Արհեստակցական կազմակերպության **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Կանանց տոնի կապակցությամբ, 2018 թվականի ապրիլի 7-ին կանանց համար կազմակերպվել է կինոդիտում Կապանի «S'Unique Movie Theatre» կինոթատրոնում, որի համար հատկացվել է 84 000 ՀՀ դրամ (42x2000դր.):
 - 11.2. **«Մշակույթ, սպորտ և հանգիստ»** ծրագրով, 2018 թվականի հուլիսի 7-ին, Գորիսի տարածաշրջան էքսկուրսիա կազմակերպելու նպատակով հատկացվել է 10 000 ՀՀ դրամ, որին մասնակցել են կազմակերպության 10 անդամ:
 - 11.3. **«Մշակույթ, սպորտ և հանգիստ»** ծրագրով, ՀԱՊՀ-ի 85 ամյակի և Կապանի մասնաճյուղի 20 ամյակի կապակցությամբ, հոկտեմբեր ամսին գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած և գիտաժողովին զեկուցող կազմակերպության անդամների համար հանգիստ կազմակերպելու նպատակով տրամադրվել է 30 000 ՀՀ դրամ:
 - 11.4. Կազմակերպության **«Սոցիալական օգնություն»** ծրագրով /մոտ հարազատի մահ/ տրամադրվել է դրամական օգնություն 20 000 ՀՀ դրամ:
 - 11.5. Արհեստակցական կազմակերպության **«Ուրախություն և տոն»** ծրագրով /ծննդյան հոբելյանական տարեդարձ/ կազմակերպության 5 անդամի տրվել է դրամական նվերներ (ներառյալ ծաղկեփունջ) 68 000 ՀՀ դրամի չափով:
 - 11.6. Արհեստակցական կազմակերպությունը, **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Նոր տարվա կապակցությամբ կազմակերպության անդամների՝ մինչև 11 տարեկան երեխաներին տվել է ամանորյա նվերներ՝ քաղցրավենիքի տոպրակի տեսքով, որի համար 2018թ.-ի հունվարին հատկացրել է 27 890 ՀՀ դրամ, իսկ 2018թ.-ի դեկտեմբերին՝ 35 000 ՀՀ դրամ:
 - 11.7. **«Մշակույթ, սպորտ և հանգիստ»** ծրագրով Նոր տարվա կապակցությամբ Արհեստակցական կազմակերպության անդամների համար կազմակերպվել է հանգիստ՝ ամանորյա «Ֆուրշետի» տեսքով, որի համար տրամադրվել է 124 558 ՀՀ դրամ:
12. Արհեստակցական կազմակերպության 2018 թվականի եկամուտների նախահաշիվը և կատարողականը բերված են աղյուսակ 1-ում, իսկ ծախսերի

նախահաշիվը և կատարողականը՝ աղյուսակ 2-ում:

1) Կազմակերպության դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին կազմել է 57 790 ՀՀ դրամ, ընթացիկ տարվա մուտքերը կազմել են 651 230 ՀՀ դրամ, իսկ ընդամենը եկամուտները՝ 709 020 ՀՀ դրամ:

2) Կազմակերպության ծրագրերով իրականացվել է 399 448 ՀՀ դրամի ծախս, գրասենյակային ծախսերը կազմել են 950 ՀՀ դրամ, տպագրական ծախսերը՝ 450 ՀՀ դրամ, այլ ծախսերը՝ 4 000 ՀՀ դրամ (բանկային ծախս), իսկ ընդամենը ծախսերը՝ 404 848 ՀՀ դրամ:

3) 2019 թվականի եկամուտների բյուջե տեղափոխված դրամական միջոցների մնացորդը կազմել է 304 172 ՀՀ դրամ:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության
2018 թվականի եկամուտների նախահաշիվը և կատարողականը**

Աղյուսակ 1

Հ/Հ	Եկամուտներ	ՀՀ դրամ	
1.	Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին	57 790	
2.	Ընթացիկ տարվա մուտքեր, այդ թվում	նախահաշիվ	675 000
		կատարողական	651 230
		կատարող. %	96,5
2.1	Անդամավճար	նախահաշիվ	672 000
		կատարողական	649 230
		կատարող. %	96,6
2.2	Մուտքի վճար	նախահաշիվ	3 000
		կատարողական	2 000
		կատարող. %	66,7
	Ընդամենը	նախահաշիվ	732 790
		կատարողական	709 020
		կատարող. %	96,8

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության
2018 թվականի ծախսերի նախահաշիվը և կատարողականը**

Աղյուսակ 2

Հ/Հ	Ծախսերի անվանումը	ՀՀ դրամ	
1.	Արհեստակցական կազմակերպության ծրագրեր	նախահաշիվ	500 000
		կատարողական	399 448
		կատարող. %	79.9
2.	Էսրախուսման ծախսեր	նախահաշիվ	80 000
		կատարողական	0
		կատարող. %	0
3.	Գործուղման ծախսեր	նախահաշիվ	40 000
		կատարողական	0
		կատարող. %	0
4.	Գրասենյակային ծախսեր	նախահաշիվ	24 000
		կատարողական	950
		կատարող. %	3.96
5.	Տպագրական ծախսեր	նախահաշիվ	5 000
		կատարողական	450
		կատարող. %	9
6.	Փոստային ծախսեր	նախահաշիվ	3 000
		կատարողական	0
		կատարող. %	0
7.	Պետական տուրքեր	նախահաշիվ	20 000
		կատարողական	0
		կատարող. %	0
8.	Այլ ծախսեր	նախահաշիվ	50 000
		կատարողական	4 000
		կատարող. %	8
	Ընդամենը	նախահաշիվ	722 000
		կատարողական	404 848
		կատարող. %	56.1

Արհեստակցական կազմակերպության նախագահ՝

Գ.Վ. Գալստյան